Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ

2025 թվական

Միջոցառումներ	Միջոցառման կատարման ընթացքը և արդյունքները (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)
1.1 Հավաստագրված սերմերի, սածիլի և տնկանյութի արտադրության խթանում՝ գիտական կենտրոնների, գրանցված սերմարտադրողների և տնկարանների միջոցով	ՀՀ ԷՆ «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ-ում արտադրվել է բանջարային մշակաբույսերի շուրջ 700 000 հատ սածիլ և շուրջ 215 կգ բանջարաբոստանային մշակաբույսերի հավաստագրված սերմեր: «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ում արտադրվել է շուրջ 130 տոննա աշնանացան ցորենի, 106 տոննա գարնանացան գարու, 5 տոննա կորնգանի, 130 տոննա առվույտի սերմեր: «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ում 2025թ. աշնանը հիմնվել է 114,7 հա աշնանացան ցորենի սերմնադաշտեր:
1.2 Սերմարտադրող տնտեսությունների տեխնիկական հագեցվածության գնահատում, առաջարկությունների մշակում և համապատասխան տեխնիկական հագեցվածության ապահովում	Ավստրիայի զարգացման գործակալության կողմից «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ին է նվիրաբերվել գութան, պարարտանյութցրիչ, ամբարձիչ, գոմաղբցրիչ, «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է հատիկաընդեղենների կալսիչ, սերմնազտիչ, ախտահանիչ, սրսկիչ, կուլտիվատոր: Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող SIGMA ծրագրի և ծրագրի գործընկեր EdAgro/ԷդԱգրո ՍՊԸ-ի հետ համատեղ ներդրումների միջոցով ՀՀ Գեղարքունիքի մարզում հիմնվել է սերմերի զտման ժամանակակից կենտրոն:
1.3 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով, ՀՀ համայնքների 180000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մոնիթորինգի աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 60000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և 20000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերին հարող տարածքներում մկնանման կրծողների, ծղրիդների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով, ՀՀ մարզերին անհատույց տրամադրվել են մկնասպան և միջատասպան թունանյութեր: Միաժամանակ գյուղացիական տնտեսությունների կողմից առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների դեմ պայքարի աշխատանքներ են իրականացվել ևս 20000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում:
1.5 Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների կանխարգելման և	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Առավել վտանգավոր հիվանդությունների և վնասատուների բռնկումների կանխարգելման և կառավարման արագ արձագանքման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծը, որը գտնվում է հաստատման փուլում:

կառավարման արագ արձագանքման միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծում	
1.6 Տնկանյութի հավաստագրման ամբողջական համակարգի, այդ թվում հավաստագրման գործընթացների թվայնացման համակարգի ներդրում և կիրարկում	Տնկանյութի հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացվել են թվով երկու ագրոնոմի հաստիքներ, որի նպատակով ՀՀ կառավարության 2025թ. օգոստոսի 28-ի N 1230-Ն որոշման համաձայն կտրամադրվի տարեկան լրացուցիչ շուրջ 7 մլն դրամ: Ներկայումս տնկանյութի հավաստագրման նպատակով ներկայացված է թվով 5 հայտ: Տնկարանային տարածքների դաշտային հետազոտողների վերապատրաստման դասընթացների մասնակցության նպատակով հավաքագրվել են հայտեր և «Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման նախագիծ» FRUITENIA-2 ծրագրի շրջանակներում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի» (ICARE) կողմից ս.թ. դեկտեմբերի 15-ից մեկնարկել է դաշտային հետազոտողների դասընթացները՝ համաձայնեցված թեմաների շրջանակներում: GIZ (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն) ProGress ծրագրի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին հավաստագրման գործընթացի իրականացման նպատակով տրամադրվել են All-in One PC, Laptop, Thermal transfer or direct thermal label printer, Thermal Transfer Resin Ribbon, Matte Silver Thermal Transfer Label Ribbon, Industrial Thermal Transfer & Direct Thermal label printer, Cordless handheld 1D/2D barcode scanner անվանումներով սարքավորումները: GIZ ProGress ծրագրի կողմից հայտարարվել է ցուցադրական նախագծի՝ տնկարանների կարողությունների զարգացման մրցույթ: Մշակվել է «Խաղողի այգիների դաշտային հետազոտության» (Ապրոբացիա) հրահանգի նախագիծը, ինդավորների և կորիզավորների ազգային ստանդարտները, որոնք առաջիկայում կներկայացվեն հաստատման: Նախատեսվում է դիմել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող SIGMA ծրագրին տնկանյութի հավաստագրման գործընթացում կիրառելու նպատակով հիվանդությունների ախտորոշման GENIE I II III սարքի տրամադրման համար:
1.7 Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի իրականացում	Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագրի շրջանակում հիմնվել է 1365 հա մակերեսով ինտենսիվ այգի: Միաժամանակ, ծրագրի շրջանակում հաստատվել է շուրջ 1399 հա այգեհիմնման հայտ:
1.8 Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում, գործարկում, ազգային գեոպորտալում արտացոլելու նպատակով թեմատիկ	Գյուղատնտեսական (խաղողի) արժեշղթայի կառավարման համակարգի ստեղծման և գործարկման նպատակով Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը 2024թ. հունիսի 27-ին ստորագրել է ՀԽԳՀ-ԵՄԾՁԲ-24/1 պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որով մեկնարկել են համակարգի ծրագրային ապահովման մշակման աշխատանքները՝ իտալական ABACO S.p.A. ընկերության կողմից: Ծրագրային ապահովման մշակման շրջանակում ծրագրավորման գործընթացները ընթանում են

շերտերի ստանդարտի մշակում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	նախատեսված ժամանակացույցով: Համաձայն նախագծի ժամանակացույցի՝ ABACO S.p.A.-ն ներկայացրել է համակարգի օգտատերերի դերերի և իրավասությունների կառավարման ֆունկցիոնալ նկարագրերը, ֆերմերների կառուցվածքային և ստանդարտացված տվյալների մուտքագրման միջերեսների ֆունկցիոնալ նկարագիրը՝ ներառյալ ֆերմերների մասին տվյալները, խաղողի տնկարկների տվյալները, խաղողի արտադրական ցուցանիշները, հայտարարագրերը, պայմանագրերը և այլ համապատասխան տեղեկությունները, վերահսկողների մոդուլի տվյալների վերահսկման և վավերացման մեխանիզմների ֆունկցիոնալ նկարագիրը, քարտեզագրման մոդուլի շրջանակում տարածական տվյալների կառավարման գործառույթների ֆունկցիոնալ նկարագիրը՝ ներառյալ խաղողի տնկարկների սահմանների թվայնացումը, քարտեզի վրա տվյալների շերտերի ստեղծումը, դիտարկումը և այլն, մթերողների (արտադրողների) կառուցվածքային և ստանդարտացված տվյալների մուտքագրման միջերեսների ֆունկցիոնալ նկարագիրը: Նշված գործողությունները ներկայացվել են Համակարգի ծրագրային ֆունկցիոնալ նախատիպերի միջոցով: Տեխնիկական փաստաթղթերի ուսումնասիրությունից, քննարկումից և հաստատումից հետո սկսվել են ծրագրավորման հիմնական աշխատանքները: Ներկայացվել է Համակարգի թեստային տարբերակը (ֆերմերների, արտադրողների, վերահսկողների և քարտեզագրման մոդուլների միջերեսները):
1.9 Աջակցություն ջերմատնային տնտեսությունների հիմնմանը	Ջերմատնային տնտեսությունների զարգացման նպատակով պետության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում կառուցվել է 25.7 հա ընդհանուր մակերեսով ջերմատնային տնտեսություն, և մեկնարկել է 64.8 հա-ի կառուցման գործընթացը:
1.10 Սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ զբաղվող սուբյեկտների և տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում	Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի գիտնականների կողմից մասնագիտական խորհրդատվություն է իրականացվել Լոռու մարզի Անտառամուտ, Ուռուտ, Շիրակի մարզի Ազատան, Երազգավորս և Գեղարքունիքի մարզի Տորֆավան, Կարմիր համայնքներում՝ կարտոֆիլի, ցորենի և հատիկաընդեղենի արտադրական և սերմնաբուծական տեխնոլոգիաների առաձնահատկությունների ուղղությամբ: Յուրաքանչյուրում մասնակցել է 20-25 հոգի: 2025թ. ձմեռային ամիսներին լաբորատոր պայմաններում շարունակվել են in vitro եղանակով հյուսվածքային բույսերի, մասնավորապես մեծ պահանջարկ ունեցող կարտոֆիլի «Մադելինա» շրջանացված սորտի տնկանյութի ստացման աշխատանքներ: Ավելացվել են շուրջ 2000 փորձանոթային բույսեր, որոնք տնկվել են բուսամաններում մինի պալարներ ստանալու նպատակով: Վերջիններս ադապտացիային են ենթարկվել ջերմատանը: Մինի պալարները պահեստավորման փուլը անցնելուց հետո 2025թ. գարնանը փոխադրվել են դաշտ և տնկվել 1000քմ տարածքում՝ սուպեր-սուպեր էլիտա պալարներ ստանալու նպատակով: 2024թ. ստացված սուպեր էլիտա փուլում գտնվող 7տ տնկանյութը ձմեռային պահպանությունից հետո 2025 թվականի ապրիլին տնկվել է 1.6 հա տարածքում էլիտա ստանալու նպատակով: ՌԴ Լորխի անվան ինստիտուտից ստացված կարտոֆիլի 10 նոր բարձրարդյունավետ սորտերի նմուշային տնկանյութը Ստեփանավանի 500քմ փորձատարածքում անցնում է կլիմայավարժեցում և 1-ին վեգետացիոն սորտափորձարկումը, հետագայում ՀՀ-ում շրջանացման առաջարկելու նպատակով:

	Շարունակվում է նաև կարտոֆիլի մեծ պահանջարկ ունեցող 4 սորտերի in vitro կտրոնավորման և բազմացման լաբորատոր աշխատանքները, որոնք անընդհատ կրկնվելու են սերմնաբուծական ցիկլը շարունակելու նպատակով:
1.11 Ռեսուրսախնայող գյուղատնտեսության վերաբերյալ գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների հզորացում և իրազեկվածության բարձրացում	ԷՆ աշխատակիցների կողմից իրականացվել են մի շարք իրազեկման աշխատանքներ, մասնավորապես՝ նախարարությունում ստացված շուրջ 1900 հեռախոսազանգերին ի պատասխան և նախարարություն այցելած 53 քաղաքացիների տրամադրվել է խորհրդատվություն, ինչպես նաև՝ իրականացվել է ավելի քան 140 հանդիպում ՀՀ բոլոր մարզերում գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերը, այդ թվում՝ դրանց ընձեռած ռեսուրսախնայող հնարավորությունները: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) կողմից Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Սիսիան համայնքներում անցկացվել են դասընթացներ անձրևաջրերի կուտակման և արդյունավետ ոռոգման վերաբերյալ, մասնակիցների թիվը՝ 25: ՀՀ 15 ՋՕԸ-ում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ ոռոգման համակարգերի և ոռոգման ջրի արդյունավետ կառավարման ուղղությամբ, մասնակիցների թիվը՝ 140 գյուղացիական տնտեսություններ: Սիսիանի և Հրազդանի «Հայանտառ» ՊՈԱԿ-ում անցկացվել են նորագույն ոռոգման տեխնոլոգիաների վերաբերյալ խորհրդատվություններ: Շահառուների թիվը՝ 25: Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Գնդևազ բնակավայրում և Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ համայնքներում անցկացվել են ջրախնայողական տեխնոլոգիաների վերաբերյալ խորհրդատվություն, թվով 65 գյուղացիական տնտեսությունների համար:
1.12 Աջակցություն ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության զարգացմանը	Մշակվել է «Օրգանական գյուղատնտեսության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը առաջիկայում կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարության 2025թ. հունիսի 5-ի N 735-Ն որոշմամբ հաստատվել է «Արտադրանքի սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկումների վճարների փոխհատուցման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է փոխհատուցել սերտիֆիկատի տրամադրման համար կատարված ծախսը՝ սերտիֆիկատի տրամադրման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 100 000 դրամը:
1.13 Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում	ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության ծրագրում կատարվել է փոփոխություն, մասնավորապես ծրագրով սահմանված միավորված հողամասի նվազագույն մակերեսը սահմանվել է 3 հա (նախկին 5 հա-ի փոխարեն), պետական աջակցության չափը սահմանվել է միավորված հողամասերի կադաստրային արժեքի 50%-ի չափով (նախկին 30%-ի փոխարեն), որոշման գործողության ժամկետը երկարացվել է մինչև 2026թ. ավարտը: ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության ծրագրի շրջանակներում կնքվել է 11 պայմանագիր՝ 810 հա ընդհանուր մակերեսով հողերի միավորման համար, որից 2 պայմանագիր՝ 30-100 հա, 2 պայմանագիր՝ 100-200 հա և 7 պայմանագիր՝ 5-30 հա մակերեսով հողերի միավորման նպատակով: «Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակներում

	ընտրված թիրախային տարածքներում՝ Արմավիրի մարզի Նորակերտ և Բաղրամյան բնակավայրերում, և Արարատի մարզի Արարատ, Այգավան, Գոռավան, Ավշար, Դաշտաքար, Վեդի, Նոյակերտ, Սիսավան, ՈՒրցաձոր բնակավայրերում նախատեսվում է իրականացնել հողերի կոնսոլիդացիայի առնվազն 10 միջոցառում:
1.14 Ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման խթանում և տարածում	Ինտենսիվ այգեգործության ծրագրերի շրջանակում հիմնվել է 1365 հա ինտենսիվ այգի (ոռոգման պարտադիր բաղադրիչով) և 47 հա ընդհանուր մակերեսով հողատարածքներում ներդրվել են ոռոգման արդիական ջրախնայող համակարգեր: Միևնույն ժամանակ, հաստատվել է 1399 հա այգեհիմնման հայտ (ոռոգման պարտադիր բաղադրիչով), իսկ միայն ոռոգման արդիական համակարգերի ներդրման բաղադրիչով հաստատվել է շուրջ 307 հա-ի հայտ: «Հայաստան-Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակում ձեռք են բերվել արդիական ոռոգման համակարգերի 9 ֆիլտրացիոն կայաններ: Նախատեսվում է ներդնել կաթիլային ոռոգման համակարգ՝ 1100 հա մակերեսով հողատարածքներում: Աշխատանքներ են ընթանում ֆերմերային տնտեսությունների հետ՝ հողերի միավորման, կոոպերատիվների հիմնադրման, ցուցադրական ֆերմերային տնտեսությունների հիմնման և ոռոգման համակարգի բարելավման նոր մեթոդների ներդրման նպատակով:
1.15 Գյուղատնտեսության ապահովագրության ծրագրի իրականացում, մոնիթորինգ և գնահատում, նոր պրոդուկտների և համակարգային մեխանիզմների մշակում	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար կնքել է 32 պայմանագիր, ապահովագրվել է 20 հա, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.86 մլն ՀՀ դրամ, սուբսիդավորված գումարը՝ շուրջ 1.3 մլն ՀՀ դրամ, տրամադրվել է շուրջ 788 հազ. ՀՀ դրամի հատուցում:
1.16 Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում	2023թ. դեկտեմբերին հանրային ներդրումային կոմիտեի հինգերորդ նիստում ընդունված որոշմամբ հաստատվել է «Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղօրոք նախազգուշացման համակարգի հիմնում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը և հանձնարարվել է այն ներառել հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների ցանկում՝ ապահովելով ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ստացման գործընթացը՝ համաձայն Կառավարության 2023թ. փետրվարի 9-ի «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» N 175-Ն որոշմամբ սահմանված կարգի 43-րդ կետի 2-րդ ենթակետի: Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի գծով շրջակա միջավայրի նախարարության ծրագրային ֆինանսավորման (Նոր նախաձեռնություններ) ամփոփ հայտը ձևավորելու նպատակով, Ծրագիրը, որպես նոր նախաձեռնություն, ներառվել է «Հիդրոօդերևու-թաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ 2025-2027թթ. ՄԺԾԾ հայտում, որի իրականացման նպատակով Կառավարության 2024թ. N 1064-Ն որոշմամբ հատկացումներ էին նախատեսվել, բայց հետագայում

	չիրականացվեցին: ՀՀ 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտում ևս, որպես նոր նախաձեռնություն ներառվել է Ծրագիրը, սակայն Ֆինանսների նախարարության կողմից «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրի գծով ծախսերի վերանայման արդյունքում արվել է 1 տարով հետաձգելու առաջարկ, ըստ որի նախատեսվում են միջոցներ 2027թ. համար 1579096,0 հազ. դրամ, 2028թ.՝ 1639767,6 հազ. դրամ և 2029թ.՝ 1730933,5 հազ. դրամ: Վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման և վաղ նախազգուշացման համակարգի հիմնման նպատակով շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Օդերևութաբանական ռադիոլոկացիոն կայանի» ձեռքբերման համար 2025 թվականի սեպտեմբերի 1-ին կազմակերպվել է ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-25/11 ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգը համարվել է չկայացած, ինչի վերաբերյալ համապատասխան հայտարարությունը հրապարակվել է ֆինանսների նախարարության գնումների կայքում՝ https://gnumner.minfin.am/website/images/original/2407c0bf.pdf:
1.17 Փոփոխվող բնակլիմայական պայմաններում ըստ գյուղատնտեսական գոտիների մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում	«Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» ծրագրի շրջանակներում մշակաբույսերի արդյունավետ մշակության հնարավորությունների գնահատում կարող է իրականացվել 2026 թվականին: Շիրակի և Տավուշի մարզերի 10 բնակավայրերում Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կարճ ցուցակ ներառված 206 տնային տնտեսությունների տնամերձ այգիների հիմնում/լավարկում և 31 տնային տնտեսությունների կողմից ներկայացված բիզնես նախագծերի աջակցում: 206 տնային տնտեսություններին նախնական գնահատականով նախատեսվում է հետևյալ աջակցություններից մեկի տրամադրումը՝ ջերմոցի հիմնում, կաթիլային ոռոգման համակարգի հիմնում, հակակարկտային ցանցի հիմնում, մոտոբլոկ, հետևյալ տեսակներից մեկ տնկանյութի ձեռքբերում և այգում տնկում՝ խնձոր, բալ, հոն, թուզ, դեղձ, տանձ, նեկտար, սալոր, նուռ, ազնվամորի, անփշոտ սև հաղարջ, ընկույզ, 31 տնային տնտեսությունների կողմից ներկայացված բիզնես նախագծերի համար. • Թունելային տիպի ջերմոց՝ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով, • Կաթիլային ոռոգման համակարգ, • Մրգերի սառնարանային պահեստ, • Խոնավեցնող ոռոգման համակարգ: Պարենի համաշխարհային կազմակերպության (WFP) կողմից 2024թ.-ին իրականացվել է Հայաստանում պարենային անվտանգության վրա կլիմայական փոփոխությունների ազդեցության գնահատում, սակայն հաշվի առնելով կլիմայական գլոբալ փոփոխությունները՝ Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությանը (OECD)՝ նոր հայեցակարգ մշակելու և հետագայում հետազոտություն իրականացնելու համար:
1.18 Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի	Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվել է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսությամբ զբաղվող

թարմացման միջոցառման իրականացում	տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 1219 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 333 միավոր տրակտոր և 2 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 5 մլրդ դրամ, ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար սուբսիդիայի գումարը կազմել է շուրջ 957 մլն դրամ:
1.19 Կարկտապաշտպան ցանցերի ներդրմանն աջակցություն	Ինտենսիվ այգեգործության ծրագրերի շրջանակում շուրջ 845 հա մակերեսով ինտենսիվ այգիների վրա ներդրվել է կարկտապաշտպան ցանց: Վարկային բաղադրիչով հաստատված այգեհիմնման հայտերի շրջանակում շուրջ 1327 հա տարածքում նախատեսվում է նաև ներդնել կարկտապաշտպան ցանցեր, իսկ ծրագրի կարկտապաշտպան ցանցերի ներդրման փոխհատուցման բաղադրիչով կնքվել է 4 պայմանագիր 5.74 հա ընդհանուր մակերեսով այգիներում կարկտապաշտպան ցանցեր ներդնելու նպատակով:
1.20 Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման ծրագրի մշակում և իրականացում	Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական երկրորդ ծրագրի շրջանակում Իջևանի համայնքապետարանի կողմից 97 քաղաքացիների հետ կնքվել են մասնակցության պայմանագրեր, 6 հա ընդհանուր մակերեսով տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար: Ծրագրի շրջանակում Իջևանի համայնքապետարանի կողմից հայտարարվել է գնահատող կազմակերպության ընտրության մրցույթ: Պայմանագրի շրջանակում գնահատող ընկերությանը տրամադրվել է 38.04 մլն ՀՀ դրամ:
1.21 Կերարտադրության խթանում, մասնավորապես՝ անասնակերի արտադրության, այդ թվում հիդրոպոնիկ եղանակով, ծավալների ավելացման նպատակով կերային մշակաբույսերի մշակության խրախուսում	Բուսաբուծության աջակցության ծրագրի շրջանակում նախնական ամփոփված տվյալների համաձայն իրականացվել է շուրջ 24006 հա գարնանացան հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանք, տրամադրվել է շուրջ 1.8 մլրդ դրամ փոխհատուցում:
1.22 Արոտավայրերի բարելավման միջոցառումների իրականացում	Հաշվի առնելով արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսական շրջանառության մեջ ներառելու կարևորությունը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2025թ. հոկտեմբերի 10-ի ՀՕ-341-Ն ՀՀ օրենքով լրացումներ է իրականացվել Հողային օրենսգրքում, համաձայն որի արոտավայրերի վարձակալության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 25 տարի ժամկետով՝ սոցիալական կամ բարեգործական կամ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր (այդ թվում՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագիր) իրականացնելու նպատակով: Ինչպես նաև սահմանվել է պարտադիր դրույթ արոտավայրերը վարձակալության իրավունքով տրամադրվելու պարագայում դրանք ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործման վերաբերյալ: Ավստրիական զարգացման գործակալության հետ համագործակցությամբ 2025թ.-ից «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության կողմից մեկնարկել է՝ «Նորարական

	անասնապահություն կենդանիների նախրաքաշ, բուծում և շուկաներ» (INLIMA) նոր ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է. 1. երեք նախրաքաշի քարտեզ, 2. մշակել 50-ից ավելի արոտային ենթակառուցվածքների նախագծեր, 3. հիմնել 23 արոտային ենթակառուցվածքներ, 4. շուրջ 60 հա դեգրադացված արոտավայրերում իրականացնել արոտավայրերի որակական բարելավում: «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս 2» ծրագրի արոտավայրերի հասանելության բարելավման բաղադրիչի շրջանակում. 1. 302 տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ և արոտօգտագործողներ (որոնց 30%-ը՝ կին) բարելավել են իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ ուղղված արոտավայրերի կայուն կառավարման, պլանավորման և վերահսկման գործընթացներին, 2. 67 գյուղական բնակավայրերում թարմացվել և ներդրվել են արոտավայրերի արդյունավետ օգտագործման և կառավարման մոտեցումներ, 3. շահագործման են հանձնվել 8 ջրախմոց և 2 հովվի կացարան: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (որպես համակատարող) «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացվել են արոտավայրերի բարելավման հետևյալ միջոցառումները. 1. Մշակվել և շրջանառվել են. - «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը, - «ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 5-ի N 725-Լ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, - Սիսիան և Թումանյան համայնքների 12 բնակավայրերի արոտավայրերի կառավարման պլանները: 2. Իրականացվել է Սիսիան համայնքի 170 հա, Թումանյան համայնքի 250 հա դեգրադացված արոտավայրերի և խոտհարքների բարելավում (քարհավաք, թփուտների և գուղձերի վերացում, տարածքից քարերի և հատված թփերի հեռացում, բազմամյա արոտային խոտաբույսերի խառնուրդ սերմերով ենթացանքի կատարում, փոցխում և դրոնների միջոցով օրգանական պարարտանյութերով պարարտացում): 3. Վայոց ձորի մարզի Վայք, Եղեգիս, Ջերմուկ և Գեղարքունիքի մարզի Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ համայնքների հողերի դեգրադացիայի գնահատում և քարտեզագրում: 4. Արոտավայրերի վերականգնման պիլոտային տարածքների ընտրություն՝ Եղեգիս 42 հա, Վայք 35 հա, Ջերմուկ 58 հա, Վարդենիս 60 հա, Մարտունի 45 հա, Շողակաթ 30 հա: Տարածքներն ընտրվել են ըստ դեգրադացիայի աստիճանի և վերականգնման իրատեսական արդյունավետության:

	5. Բարելավման նպատակով ձեռք են բերվել և համայնքներին տրամադրվել հանքային պարարտանյութեր և տարածքին բնորոշ արոտային խոտաբույսերի սերմեր: Բարելավման աշխատանքները կմեկնարկեն 2026 թվականի գարնանը: 6. Ագրոբնապահպանական վճարի ներդրման նպատակով մշակվել է ագրոբնապահպանական վճարի հաշվարկման մեխանիզմը, արոտավայրերի արտադրողականության գնահատման մեթոդաբանությունը և արոտվերականգնման աշխատանքների մոնիթորինգի գործիքակազմը: 7. Արոտավայրերի վրա ճնշումը նվազեցնելու և կենդանիների պահվածքը բարելավերու նպատակով Վարդենիկ, Գետիկ, Դրախտիկ, Քարագլուխ, Գոմք և Բարձրունի բնակավայրերի վարչական տարածքներում կառուցվել են մեկական ջրարբիացման կետեր: 8. Բարելավվել են Ուրցաձոր՝ 120 հա, Շաղափ՝ 101 հա, Լանջանիստ՝ 30 հա բնակավայրերի դեգրադացված արոտավայրեր: Բարելավումն իրականացվել է հանքային (ազոտական, ֆոսֆորական, կալիումական), օրգանական պարարտանյութերի համակցմամբ և տարածքին բնորոշ արոտային խոտաբույսերի սերմերի ցանքով:
2.1 Տոհմային անասնաբուծության զարգացում՝ տոհմային կենդանիների ձեռք բերման աջակցության ծրագրերի իրականացում. «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028թթ. ծրագիր» «Մթերատվության բարձրացման փորձնական ծրագիր» «ՀՀ-ում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր»	 Ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 571 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ բլանշ և էդիլբայան ցեղերի տոհմային ոչխարներ և 78 գլուխ զաանենյան և ալպիական ցեղերի տոհմային այծեր: Ծրագրի շրջանակում ՀՀ Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում իրականացվել է 3350 կովերի արհեստական սերմնավորում: Ծրագրի շրջանակում վարկային բաղադրիչով կնքվել է 1 պայմանագիր՝ 32 գլուխ տոհմային ԽԵԿ ձեռք բերելու նպատակով, և փոխհատուցման բաղադրիչով 3 շահառուի կողմից ձեռք է բերվել 110 գլուխ տոհմային ԽԵԿ:
2.2 «Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական	Ծրագրին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 8 տնտեսավարող, սակայն փաստաթղթերի ամբողջական փաթեթը մինչև ծրագրով նախատեսված ժամկետը՝ 2025թ. նոյեմբերի 1-ը, չներկայացնելու հետևանքով չեն ճանաչվել որպես շահառու:

խեցգետնաբուծության զարգացման 2024-2026 թվականների ծրագիր»	
2.3 «Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագիր»	Ծրագրի շրջանակում հայտ է ներկայացրել 150 տնտեսավարող, որոնցից 112-ը հաշվառվել է որպես շահառու, 85 շահառուի կողմից ձեռք է բերվել 1900 մեղվաընտանիք՝ մեղվափեթակներով:
2.4 Կենդանիների նույնականացման համակարգի ներդրում և բարելավում	Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և հաշվառման ծրագրի շրջանակում համարակալվել է 1 028 351 գլուխ, որից՝ 162 981 գլուխ խոշոր և 865 370 գլուխ մանր եղջերավոր կենդանի:
2.5 «Խելացի» անասնաշենքերի կառուցմանը կամ վերակառուցմանը և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն	Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության 2019-2024 թվականների ծրագրի շրջանակում 5 շահառուի տրամադրվել է 69.5 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում, որոնցից 3-ին՝ 40-45 գլուխ, 1-ին՝ 20-25 գլուխ, 1-ին՝ 10-15 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված անասնաշենքի կառուցման աշխատանքներն ավարտելու նպատակով: «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագրի շրջանակում 3 ընկերություն՝ 95-100 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված անասնաշենքերի կառուցման նպատակով, հաշվառվել են որպես ծրագրի շահառու:
2.6 «ՀՀ-ում գյուղատնտեսական կենդանիների բրուցելոզ հիվանդության վերահսկմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում	ՀՀ-ում բրուցելոզի վերահսկման վերացման և կանխարգելման ծրագիրը ներկայումս գտնվում է շրջանառության փուլում: Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի շրջանակներում հանրապետության բոլոր համայնքներում իրականացվել է 718 954 արյունառման միջոցառում ՝ բրուցելոզի ախտորոշման նպատակով: Դրական հակազդած կենդանիները ենթարկվել են հարկադիր սպանդի:
2.7 Անասնաբուժական դեղամիջոցների (հատկապես հակաբիոտիկների) շրջանառության կարգի մշակում	«Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը մշակվել և շրջանառվել է: Վերջինս գտնվում է լրամշակման փուլում: Վերոնշյալ օրենքները հաստատվելուց հետո, կմշակվի «Անասնաբուժական դեղամիոցների շրջանառության կարգի մշակում» ենթաօրենսդրական ակտը:
3.1 Աշխարհագրական նշումների մասին օրենքի բարելավում և ավելի քան 10 անվանում հայկական	Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումով արտադրանքների գրանցման համար համապատասխան հայտեր են ներկայացվել Մտավոր սեփականության գրասենյակ, որոնք պաշտոնապես

աշխարհագրական նշումներով արտադրանքի գրանցում	գրանցվել և իրավապաշտպանություն են ստացել ՀՀ-ում: Մշակվել են Հայկական բրենդի և Վայոց Ձորի գինիներ աշխարհագրական նշումով արտադրանքների տեխնիկական հատկորոշումների նախագծերը:
3.2 Հայաստանի գինիների առաջխաղացում	Արտաքին շուկաներում Հայաստանի գինիների ճանաչելիության բարձրացման, գործարար նոր կապերի հաստատման և համագործակցությունների ձեռքբերման, արտադրանքի արտահանման ծավալների աճի խթանման նպատակով. 1) Կազմակերպվել է հայկական գինեգործական ընկերությունների մասնակցությունը Գերմանիայի Դյուսելդորֆում կայացած հեղինակավոր ProWein գինիների և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդեսին, Ֆրանսիայի Փարիզում անցկացված Wine Paris միջազգային ցուցահանդեսին, Տոկիոյում կայացած FOODEX Japan Ասիայի խոշորագույն սննդի և ըմպելիքների ցուցահանդեսին, ինչպես նաև Եկատերինբուրգում անցկացվող ArmWine թեմատիկական ցուցահանդեսներին: 2) Կազմակերպվել են հայկական գինիների մասնագիտական համտես-շնորհանդեսներ միջազգային փորձագետների, լրագրողների և ոլորտի մասնագետների համար: 3) Հայկական գինեգործական ընկերությունների ներկայացրած գինիները արժանացել են բարձր մրցանակների Concours Mondial de Bruxelles և International Wine and Spirit Competition հեղինակավոր մրցույթներում: 4) Չինաստանի Ինչուան քաղաքում անցկացված Concours Mondial de Bruxelles մրցույթի շրջանակում հայկական պատվիրակությունը մասնակցել է որպես համտեսող-գնահատող: Մրցույթի վերջին օրը՝ հունիսի 12-ին, հայտարարվել է, որ 2026թ. մրցույթը կհյուրընկալի Հայաստանը: 5) Շվեյցարիայի «Շանժեն» խաղողագործության և գինեգործության բարձրագույն դպրոցի (HES-SO) միջազգային ամառային ծրագրի շրջանակում կազմակերպվել է մի շարք երկրների առաջատար համալսարանների ուսանողների այց: Իրականացվել է նաև Ճապոնիայի ROTOBO «Business Matching» ծրագրի պատվիրակության այց: 6) Միջազգային մեդիա հարթակներում հրապարակվել է շուրջ 40, իսկ տեղական մեդիայում՝ շուրջ 70 հրապարակում՝ ուղղված հայկական գինեգործության ճանաչելիության բարձրացմանը: 7) Հաջողությամբ ներկայացվել է հայտ և ընդգրկվել է Ճապոնիայի ԷԱԱ նախարարության կողմից ֆինանսավորվող Trade and Investment Promotion Project ծրագրում: «Business Matching» նախաձեռնության շրջանակում հայ գինեգործները առաջին անգամ միասնական տաղավարով մասնակցել են Տոկիոյում կայացած «FOODEX JAPAN» ցուցահանդեսին: 8) Աջակցություն է տրամադրվել «Ամերիկյան երկրների մրցունակության փոխանակում» (ACE Armenia) ծրագրի մասնակիցների Վայոց ձոր այցի կազմակերպմանը, ինչպես նաև ապահովվել է մասնակցություն ոլորտային պանելային քննարկմանը: 9) Սկսվել է համագործակցություն աշխարհի խոշորագույն գինու առցանց հարթակներից մեկի՝ Vivino-ի հետ: Գովազդային արշավներին մասնակցել է 14 հայկական գինեգործական ընկերության՝ 29 տարբեր անվանումների գինի: 10) Ֆրանսիայի Օվերն–Ռոն–Ալպ տարածաշրջանի հետ համագործակցության արդյունքում իրականացվել են

	փոխադարձ այցելություններ՝ փորձի փոխանակման նպատակով: 11) Ամեն ամիս վերանայվել ու վերամշակվել են «Wines of Armenia» առցանց հարթակի սոցմեդիա էջերի համար նախատեսված արշավային տեքստերն ու լուսանկարները՝ ապահովելով բարձրակարգ մասնագիտական բովանդակություն: 12) Կազմակերպվել է 6 ընկերության գինիների արտահանում դեպի Բեռլինում գործող լոգիստիկ կենտրոն՝ «Wines of Armenia» առցանց հարթակում ներկայացնելու համար: 13) GIZ-ի հետ համագործակցությամբ անցկացվել է գինեգործության ոլորտի ներկայացուցիչների երկօրյա վերապատրաստում՝ միջազգային ցուցահանդեսներին արդյունավետ մասնակցության հմտությունների կատարելագործման նպատակով:
3.3 ՀՀ ԷՆ աշխատակիցների և գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացում գյուղատնտեսության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման և կլիմայի փոփոխության համատեքստում	«Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակում իրականացվել են մի շարք վերապատրաստումներ, տեխնիկական խորհրդատվություններ, ժամանակակից տեխնոլոգիաների փորձարկում և տարածում, ինչպես նաև ոլորտային ռազմավարական կարողությունների ամրապնդում: ԷՆ 37 աշխատակից մասնակցել է 8 թեմայով կազմակերպված դասընթացների: Գրեթե ամենօրյա ռեժիմով իրականացվել են այցեր ծրագրի 11 թիրախային բնակավայրեր Արարատի և Արմավիրի մարզերում, որտեղ ծրագրի խորհրդատվական ծառայության աշխատակիցները խորհրդատվական հանդիպումներ են ունեցել շահառու ֆերմերների հետ: Արդյունքում, ակնկալվում է կայուն, տեխնոլոգիապես զարգացած և կլիմայական ռիսկերին հարմարեցված գյուղատնտեսական համակարգի ձևավորում:
3.4 Մասնագիտական խորհրդատվական խմբերի ձևավորում և խորհրդատվական ծառայության տրամադրում գյուղացիական տնտեսավարողներին	«Ոռոգվող գյուղատնտեսության զարգացումը Արարատի և Արմավիրի մարզերում» ծրագրի շրջանակում Արարատի և Արմավիրի մարզերում ձևավորվել են գյուղատնտեսական խորհրդատվական ծառայությունների 3 թիմեր (AEST): AEST թիմերի գործունեությունը ներառում է ուսուցողական այցերի կազմակերպում դեպի ցուցադրական ֆերմաներ, որտեղ ֆերմերներն ու ոլորտի հետաքրքրված մասնագետները հնարավորություն են ստանում տեղում ծանոթանալ արդյունավետ հողագործական մեթոդներին, բարձրորակ սերմերի և տնկիների օգտագործման առանձնահատկություններին: Այս այցերը նպաստում են գիտելիքների փոխանակմանը, փորձի տարածմանը և համայնքային ֆերմերների միջև համագործակցության ամրապնդմանը՝ վերջնական արդյունքում աջակցելով տարածաշրջանի գյուղատնտեսության կայուն զարգացմանը: Ծրագրի շրջանակում ընտրվել են 20 տնտեսություններ: Նախատեսվում է, որ ընտրված շահառուները կֆինանսավորվեն մինչև 5000 քմ հողատարածքներում ցուցադրական ֆերմաների ստեղծման նպատակով: Յուրաքանչյուր շահառուի տրամադրվող ֆինանսավորումը կկազմի առնվազն 5 մլն դրամ:
3.5 Ագրոպարենային ոլորտի ընկերությունների արտադրական կարողությունների հզորացում և արդիականացում	ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի սարքավորումների տրամադրումը տնտեսավարողներին: Հաստատվել է 165 լիզինգի հայտ շուրջ 6.9 մլրդ դրամ ծավալով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 422 միավոր սարքավորում, ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար սուբսիդիայի գումարը կազմել է շուրջ 2.9 մլրդ դրամ:

3.6 Հումքի մթերման գործընթացին աջակցություն	Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում հաստատվել է 238 հայտ՝ շուրջ 19.6 մլրդ դրամ ծավալով, որոնց շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել են 7833 հատ բերքի գնման պայմանագիր, ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար սուբսիդիայի գումարը կազմել է շուրջ 3.3 մլրդ դրամ:
3.7 Հետբերքահավաքային կարողությունների հզորացում (օրինակ՝ սառնարանային տնտեսություններ, պահեստներ, լոգիստիկ կենտրոններ և այլն)	Լոգիստիկ և շուկայավարման կենտրոնների գործառույթներ են իրականացվում «Սպայկա» և «Արլեամ (Սորտստոր)» ՍՊԸ-ների կողմից: 2025թ. սեպտեմբերին «Սպայկա» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի Տափերական բնակավայրում շահագործման է հանձնվել շուրջ 10000 տոննա հզորությամբ սառնարանային համալիր: 2025թ. նոյեմբերին «Ագրոպրո» ՓԲԸ-ի կողմից շահագործման է հանձնվել ժամանակակից արդիական տեխնոլոգիաներով հագեցած գյուղատնտեսական առաջնային արտադրանքի լոգիստիկ կենտրոնը, որը կիրականացնի թարմ մրգի սառեցման, պահեստավորման, տեսակավորման, փաթեթավորման և արտահանման գործառույթներ: Համաձայն ՀՀ մարզպետարաններից ստացված՝ մարզերում միջազգային կառույցների աջակցությամբ կամ մասնավոր ներդրումներով ստեղծված, գործարկված, կառուցման փուլում գտնվող և առաջիկայում պլանավորված սառնարանային պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության համաձայն. 1) Արագածոտնի մարզ – 26 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 3 սառնարանային տնտեսություն, 2) Լոռու մարզ - 1 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային տնտեսություն, 3) Արարատի մարզ - 2 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 11 սառնարանային տնտեսություն, 4) Կոտայքի մարզ – 6 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 4 սառնարանային տնտեսություն, 5) Շիրակի մարզ - 8 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 2 սառնարանային տնտեսություն, 6) Արմավիրի մարզ – 10 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 8 սառնարանային տնտեսություն, 7) Տավուշի մարզ - 8 սառնարանային տնտեսություն, կառուցման փուլում է գտնվում 1 սառնարանային տնտեսություն, 8) Սյունիքի մարզ - 1 սառնարանային տնտեսություն, 9) Գեղարքունիքի մարզ - 16 սառնարանային տնտեսություն: Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող ADB CAFSEP ծրագրի «Agricultural Logistics Hubs Feasibility Study» առաջադրանքի շրջանակներում իրականացվում է Հայաստանի համար երկու գյուղատնտեսական լոգիստիկ հանգույցների տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություն՝

	Շիրակի և Տավուշի մարզերում, որի նպատակն է բարձրացնել բուսաբուծական արժեշղթաների արդյունավետությունը, նվազեցնել հետբերքահավաքային կորուստները, բարելավել շուկաներին հասանելիությունը և ձևավորել ներդրումային պատրաստի ենթակառուցվածքային լուծումներ: Կկատարվեն նաև լոգիստիկ կենտրոնների հավանական տեղակայման և մասշտաբների որոշում, նախնական նախագծային և ծախսային հաշվարկներ:
3.8 Սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) սննդի անվտանգության կառավարման համակարգի կամ ISO 22000 ստանդարտի ներդրման աջակցության ծրագրի մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2024թ. մշակված «Կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը հաստատվել է 2025թ. հունիսի 5-ի N 737-Ն որոշմամբ, որն ուղղված է հայաստանյան արտադրողների մրցունակության բարձրացմանը՝ աջակցելով նրանց ներդնելու միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարման համակարգեր և ստանալու համապատասխան սերտիֆիկատներ: Որոշմամբ հաստատված ծրագրի գլխավոր նպատակն է աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ), որպեսզի ներդնեն միջազգային ստանդարտներ: Այն կնպաստի. 1. հայկական արտադրանքի և ծառայությունների որակի և անվտանգության մակարդակի բարձրացմանը. 2. միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորությունների ընդլայնմանը և արտահանման ներուժի մեծացմանը. 3. առանցքային ոլորտներում (սննդի անվտանգություն, գյուղատնտեսություն և արտադրություն) կայուն աճի ապահովմանը: Ծրագրի համաձայն նախատեսվում է մասնակի փոխհատուցել արտադրությունում կառավարման համակարգերի (ԻՍՕ 9001, ԻՍՕ 14001, ISO և FSSC 22000) ներդրման նպատակով մատուցված խորհրդատվական ծառայության համար կատարված ծախսերը, արտադրությունում ներդրված կառավարման համակարգերի սերտիֆիկացման ծախսերը (ISO 9001, ISO 14001 կամ FSSC 22000, ISO 22000 ստանդարտներից որևէ մեկին համապատասխան տրամադրված սերտիֆիկատի ծախսերը), Գլոբալ Գ.Ա.Փ. (այսուհետ՝ Global G.A.P.), «հալալ», «օրգանական», «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների ծախսերը, և այլն): Փոխհատուցումը նախատեսվում է իրականացնել հետևյալ չափերով՝ 1) ISO 9001 և ISO 14001 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 000 000 (մեկ միլիոն) դրամ. 2) ISO 22000 և FSSC 22000 սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ. 3) «Global G.A.P.», «Հալալ», «օրգանական» և «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների դեպքում՝ սերտիֆիկացման ծախսի 50%-ի չափով, բայց ոչ ավելի քան 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ: Սերտիֆիկատների ստացման աջակցությունից օգտվելու համար 2025 թվականին ստացված 10 դիմում-հայտից աջակցություն է տրամադրվել երեք կազմակերպության (մեկը օրգանական սերտիֆիկատի, երկուսը՝

	ISO 22000 համար): Մնացած կազմակերպությունների կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթներում բացակայել են հիմնարար փաստաթղթերը, մասնավորապես՝ սերտիֆիկատի բնօրինակը, սերտիֆիկացման ծախսը հիմնավորող փաստաթղթերը, ինչի արդյունքում փախհատուցման գործընթացը մերժվել է: Որոշմամբ հաստատված ծրագիրը կարևոր քայլ է հայկական արտադրության որակական հատկանիշների բարելավման և արտաքին շուկաներում մեր երկրի դիրքերի ամրապնդման գործում և կնպաստի հայկական արտադրանքի որակի բարձրացմանը, առանցքային ոլորտների աճի և մրցունակության խթանմանը:
3.9 Գյուղատնտեսության ոլորտում սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և ներդրում	Գյուղատնտեսության ոլորտում մշակվել և ներդրվել են սուբսիդավորման նոր մեխանիզմներ, մասնավորապես. • Հողերի կոնսոլիդացիայի ծրագրի շրջանակում առնվազն 3 հա գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման դեպքում փոխհատուցվում է Էկոնոմիկայի նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված և միավորված առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի 50%-ը, • Մթերատվության բարձրացման 2025-2026թթ. փորձնական ծրագրի շրջանակում նախատեսվում է փոխհատուցել կովերի արհեստական սերմնավորման ծախսերի 70%-ը, • Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակում 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի մինչև 80 (ներառյալ) տոկոսի չափով սուբսիդավորում: 2025 թվականին Կառավարությունը, բացի ապահովագրավճարի սուբսիդավորումից, ծրագրով աջակցություն է նախատեսել նաև ապահովագրական ընկերություններին՝ ապահովագրական հատուցումների որոշակի շեմը գերազանցելու դեպքում փոխհատուցում տրամադրելու միջոցով, մասնավորապես, 2025 թվականի գյուղատնտեսական տարվա համար գործակալության անդամ յուրաքանչյուր ապահովագրական ընկերությանը կփոխհատուցվեր նաև վերջինիս կողմից ընդհանուր հավաքագրված ապահովագրավճարի հանրագումարի 200 տոկոսի չափը գերազանցող, տնտեսավարողներին փոխհատուցված ապահովագրական հատուցումների գումարը, • ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2026 թվականների ծրագրի շրջանակում կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող թվով 271 բնակավայրերի 0.5-3 հա բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար կապալառուին կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 75%-ը, իսկ կարկտի առավել ակտիվ գոտիներում չգտնվող բնակավայրերում՝ 50 %-ը, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծրագրով սահմանված ծախսի առավելագույն սահմանաչափի համապատասխանաբար 75 կամ 50 %-ը, • ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրով 2025 թվականին տրամադրվող սուբսիդավորվող վարկի մինչև 3 մլրդ դրամ գումարի մասնաբաժինը սուբսիդավորվում է 10 տոկոսային կետով, 3-9 մլրդ դրամ գումարի մասնաբաժինը՝ 9 տոկոսային կետով, իսկ 9-15 մլրդ գումարի

	մասնաբաժինը՝ 8 տոկոսային կետով, իսկ 2026թ. հունվարի 1-ից հետո ծրագրին դիմող շահառուների տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը համապատասխանաբար նվազեցվել է 2 տոկոսային կետով, • Կառավարության 2025թ. հոկտեմբերի 9-ի N 1441-Լ որոշմամբ հաստատվել է 2024 և 2025 թվականներին ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերում տեղացած կարկուտի հետևանքով հողօգտագործողներին պատճառված վնասների մասնակի փոխհատուցման տրամադրման կարգը, որով նախատեսվում է կարկուտի հետևանքով պատճառված վնասների դիմաց փոխհատուցում տրամադրել այն հողօգտագործողներին, որոնց կողմից օգտագործվող ցանքատարածություններում և այգետարածքներում համայնքային հանձնաժողովների կողմից կազմված, մարզային հանձնաժողովներում քննարկված, հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփված և հրապարակված ակտերի հիման վրա գյուղատնտեսական մշակաբույսերին հասցված վնասը կազմել է 40-100 տոկոս: Փոխհատուցման գումարների հաշվարկման համար հիմք են հանդիսացել Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի շրջանակներում սահմանված՝ ըստ մշակաբույսերի ապահովագրական գումարի նվազագույն մակարդակի 70%-ը, դրա նկատմամբ վնասի չափից ելնելով հաշվարկվել է վնասի հատուցման գումարը՝ նվազեցնելով ապահովագրական ընկերությունների կողմից չհատուցվող գումարը և ապահովագրավճարը: Արդյունքում ստացվող գումարի 70%-ը կազմում է փոխհատուցվող գումարը, • Կառավարության 2025թ. մայիսի 8-ի N 569-Լ որոշմամբ հաստատվել է Սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիրը, որը մեկնարկել է 2025թ. հունիսի 6-ից: Ծրագրով նախատեսվել է ֆերմերային տնտեսության համար մատուցած սպանդի ծառայության դիմաց սպանդանոցներին տրամադրել ծառայության վճարի մասնակի փոխհատուցում ֆերմերային տնտեսության կողմից յուրաքանչյուր խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության ձեռքբերման համար սպանդանոցի կողմից սահմանված վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 10000 ՀՀ դրամ, իսկ բրուցելոզով հիվանդ յուրաքանչյուր խոշոր եղջերավոր կենդանու սպանդի ծառայության ձեռքբերման համար սպանդանոցի կողմից սահմանված վճարի չափով, բայց ոչ ավելի, քան 15000 ՀՀ դրամ: • ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում գյուղատնտեսական կոոպերատիվների համար լիզինգի տոկոսադրույքը (առավելագույնը՝ 14 տոկոս) կսուբսիդավորվի այնպիսի չափաքանակով, որ վերջինիս կողմից վճարման ենթակա լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս, ինչպես նաև մինչև 2026թ. դեկտեմբերի 30-ը ֆինանսական կառույցների հետ լիզինգի տրամադրման պայմանագիր կնքած գյուղատնտեսական կոոպերատիվների համար կսուբսիդավորվի լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոս կանխավճարի 30 տոկոսը, • Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրով նախատեսվում է մի քանի ուղղություններով (ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից ջրային ռեսուրսների այլընտրանքային օգտագործման ապահովման նպատակով ձեռք բերվող սարքավորումներ, հիդրոպոնիկ եղանակով կանաչ կերի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից ձեռք բերվող

	սարքավորումներ, շարժական կամ շարժական մոդուլային սպանդանոցներ) ձեռք բերվող սարքավորումների համար անհրաժեշտ կանխավճարի մասնակի սուբսիդավորում, • «ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 15-ի N 1264-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ Լոռու և Տավուշի մարզերում 2024թ. մայիսի 25-26-ը առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքների այն բնակիչներին, որոնք գյուղատնտեսության ոլորտում կրել են վնասներ, սակայն տարբեր պատճառներով չեն օգտվել փոխհատուցման կարգով սահմանված օժանդակությունից՝ թույլատրվել է կրած վնասի դիմաց տրամադրել փոխհատուցում, • «ՀՀ կառավարության 2024թ. օգոստոսի 15-ի N 1264-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ Լոռու մարզի Նոյեմբերյան համայնքում՝ կարգով աջակցություն ստացած այն շահառուներին, որոնք աղետի հետևանքով վնասված (վերականգնման ենթակա) պտղատու ծառերի դիմաց ստացել են փոխհատուցում, սակայն արտակարգ իրավիճակի հետևանքով պատճառված վնասների գնահատման համայնքային և մարզային հանձնաժողովների կողմից 2025թ. կատարված լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ պտղատու ծառերը վերականգնման ենթակա չեն՝ ստանալու կրած վնասի դիմաց փոխհատուցում՝ կարգով միավորի հաշվով գնահատված ոչնչացված կամ կորսված և վնասված (վերականգնման ենթակա) փոխհատուցման ենթակա գումարների տարբերության չափով, • Կառավարության 2025թ. հոկտեմբերի 23-ի N 1488-Լ որոշմամբ հաստատվել է «Կոնյակի սպիրտի արտահանման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 971-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին աջակցության ծրագիրը, որով նախատեսվում է տնտեսավարողներին տրամադրել պետական աջակցություն արտահանված յուրաքանչյուր 100 հազար լիտրը գերազանցող կոնյակի սպիրտների համար 100 դրամի չափով, որը վերջիններիս հնարավորություն կտա նվազեցնելու թողարկվող արտադրանքի ինքնարժեքը, իրացման շուկաներում ներկայացնելու ավելի մրցունակ գներով արտադրանք, ավելացնելու արտահանման ծավալները, ինչպես նաև խթանելու լրացուցիչ քանակությամբ խաղողի մթերումների իրականացումը, քանի որ տրամադրվող աջակցության ընդհանուր չափը կապակցվում է մթերված խաղողի քանակության հետ:
3.10 Ագրոպարենային համակարգում ժամանակակից հմտությունների և կարողությունների զարգացում գյուղական բնակավայրերի պատանիների և երիտասարդների համար	ԷՆ աշխատակիցների կողմից մի շարք հանդիպումներ են իրականացվել գյուղատնտեսական մասնագիտություններով կրթություն իրականացնող մի շարք նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների հետ, մասնավորապես՝ - Կոտայքի պետական տարածաշրջանային քոլեջում, - Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, - Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարանում, - Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում, - Մարալիկի պետական ուսումնարանում, - Ամասիայի պետական ուսումնարանում,

	- Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջում, - Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարանում, - Էջմիածինի Վ. Համազասպյանի անվան պետական քոլեջում, - Արագածի արհեստագործական պետական ուսումնարանում: Ապահովվել է գործուն մասնակցություն գյուղատնտեսական մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնող Մասնագիտական ուսումնական հաստատությունների միասնական ցանցի ստեղծմանը նվիրված աշխատանքներին: Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (ՀԱԱՀ) 2024 թվականից մինչև 2025 թվականն իրականացրել է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել են 15–29 տարեկան պատանիների և երիտասարդների համար կարճաժամկետ մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել է ավելի քան 2000 մարզային երիտասարդ: Բացի այդ, ՀԱԱՀ-ն ներդրել է «Ագրոտեխնոլոգիա» մասնագիտական կողմնորոշման դասընթացը Տավուշի և Սյունիքի մարզերի դպրոցներում: Ընդհանուր առմամբ, ավելի քան 350 աշակերտ 2024-2025թթ. ուսումնական տարվա ընթացքում ուսումնառություն է ստացել «Ագրոտեխնոլոգիա դասընթաց» ծրագրի շրջանակներում: 2025թ. շրջանավարտներից 7-ը արդեն շարունակել են իրենց ուսումը համալսարանում: Ներկայումս ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ՀՀ այլ դպրոցներ նույնպես հնարավորություն ունեն ներմուծել այս դասընթացը որպես հիմնական առարկա: 220 երիտասարդ մասնագետ վերապատրաստվել է հետևյալ ուղղություններով՝ - բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ, - դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն, - տրակտորիստ-մեքենավարներ, - հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն, - շոկոլադագործություն, - ձկնաբուծություն, - չրագործություն, - քրաֆտ գարեջրագործություն, - մեղվաբուծության հիմունքներ, - ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում, - պտղաբուծություն. - դասավանդման ժամանակակից մեթոդներ, - ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում: Հողային և ջրային ռեսուրսների կրթական ծրագրով սովորող գյուղաբնակ ուսանողների հետ իրենց բնակավայրերում իրականացվել են գյուղատնտեսության գործունեության կարողությունների բացահայտման աշխատանքներ, հիմք ընդունելով ագրարային ճարտարագիտության ոլորտում արդի տեխնոլոգիական լուծումները:

3.11 Գյուղատնտեսական աջակցության ծրագրերի իրականացման ընթացակարգի թվայնացում	Թվայնացվել է ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի ոռոգման համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար ծախսերի փոխհատուցման բաղադրիչի մասնակցության դիմումների ընդունման գործընթացը: Հղումը հետևյալն է՝ https://benefits.mineconomy.am/services/73fa556b-5ec8-43d7-8ecb-5e4354752801: Ծառայությունը տեղադրված է Ծառայությունների ազգային հարթակում (https://www.hartak.am/services/ca5f482a-1748-4607-abb0-19ef56f0e81d/yesem) և ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում (https://mineconomy.am/page/1948): Օգտատերերի գոհունակության գնահատման համակարգը ևս ինտեգրված է թվային ծառայությանը:
3.12 Գյուղատնտեսությունում տնտեսավարողների, մասնավորապես խաղողագործների հաշվառման համակարգի ստեղծում և վարում	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից իրականացվել են աշխատանքներ խաղողի այգետարածքների ռեեստրի ստեղծման ուղղությամբ, որը հիմք կհանդիսանա գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների հաշվառման համակարգ ստեղծելու համար: Մշակվել է «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ ներառված են նաև գյուղացիական տնտեսավարողների հաշվառման և գյուղատնտեսական արտադրանքի հայտարարագրման պահանջ սահմանելու մասին դրույթներ:
3.13 Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման միջոցառման իրականացում	Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման դրամաշնորհային ծրագրի շրջանակում ընտրվել են 3 խորհրդատվական ընկերությունները, իրականացվել է ծրագրով նախատեսված 10 համայնքներից 230 շահառու տնային տնտեսությունների ընտրությունը, նշված համայնքներում իրականացվել են աշխատանքները ՀԷՑ-ի հետ՝ համապատասխան արևային կայանների հզորության ապահովման նպատակով, պլանավորվում է իրականացնել սեյսմիկ հետազոտություններ՝ ընտրված հանրային նշանակության շինություններում:
3.14 «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետի աջակցությամբ մշակվել է «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայացվել շահագրգիռ գերատեսչություններին: Վերջիններիս կողմից ստացված կարծիքների հիման վրա գտնվում է լրամշակման փուլում:
3.15 Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգի մշակում	«Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու, կասեցնելու կամ դադարեցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2025թ. մայիսի 8-ի N 563-Ն որոշմամբ: ԷՆ պաշտոնական կայքէջում 2025թ. հոկտեմբերի 27-ին հայտարարված Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու մրցույթի արդյունքում, «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՓԲԸ-ն հինգ տարով լիազորվել է իրականացնելու ռիսկի գնահատում անասնաբուժության ոլորտում՝ վիրուսային և մանրէային ծագման հիվանդությունների ցուցանիշներով (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2025թ. նոյեմբերի 14-ի N 3480-Ա հրաման): Գիտական կազմակերպությանն անասնաբուժության ոլորտում ռիսկի գնահատման լիազորումն ունի կարևոր նշանակություն՝ անասնաբուժության ոլորտի տվյալների ամբողջականության, անվտանգության և

	հուսալիության ապահովման համար, ինչը հնարավորություն կտա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին իրականացնել պետական վերահսկողություն՝ Գիտական կազմակերպության կողմից գնահատված ռիսկերի հիման վրա, իսկ քաղաքականություն մշակող մարմնին՝ ռիսկի գնահատման արդյունքներից ելնելով իրականացնել օրենսդրական բարեփոխումներ: Միջոցառումներն ուղղված են կանխելու մարդու կյանքին և առողջությանը, կենդանիների առողջությանն ու բարեկեցությանն սպառնացող բացասական ներգործություն ունեցող վտանգները:
3.16 Գյուղատնտեսությանն առնչվող թեմատիկ շերտերի ստեղծում, վարում և ընդլայնում, ինտեգրում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալին	Ստեղծվել և պարբերաբար թարմացվել են Էկոնոմիկայի նախարարության maps.mineconomy.am պորտալում արտապատկերված 9 տարածական թեմատիկ շերտեր՝ - Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի տարածական շերտը, որտեղ քարտեզագրված են նույնանուն ծրագրի 1019 շահառուների տվյալները: - ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացմանն ուղղված պետական աջակցության շրջանակում հիմնված այգիների «Ինտենսիվ այգիներ» տարածական շերտը, որտեղ քարտեզագրված է 4284 հեկտար ինտենսիվ այգի: - Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի շերտը, որը ներառում է 58 քարտեզագրված անասնաշենք: - Մթերատվության բարձրացման ծրագրի տարածական շերտը, որտեղ թվայնացվել և քարտեզագրվել են 306 գլուխ սերմնավորված կենդանու (ականջապիտակի համար) տվյալները: - Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շերտը, որտեղ տեղորոշվել և քարտեզագրվել են 267 գյուղատնտեսական հումք մթերող ընկերություններ: - Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ծրագրի տարածական շերտը, որը ներառում է 1962 գլուխ կենդանիների տվյալներ: - Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման աջակցության ծրագրի շերտը, որտեղ քարտեզագրված են 9.4 հեկտար ջերմատներ: - ՀՀ-ում գործող սպանդանոցների տարածական շերտը, որը ներառում է 133 գործող սպանդանոցների տվյալներ: - «ՀՀ-ում 2019–2024թթ. տավարաբուծության զարգացման» ծրագրի տարածական շերտը, որտեղ քարտեզագրվել են 2395 գլուխ կենդանիների տվյալներ:
3.17 Նվազագույն պարենային զամբյուղի հաշվարկում	ԷՆ կողմից Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետների աջակցությամբ իրականացվել է Նվազագույն պարենային զամբյուղների արժեքների միջազգային պրակտիկայում կիրառվող մոդելների վերլուծություն և կազմվել է դրանք Հայաստանում ներդնելու վերաբերյալ առաջարկությունների նախագծի նախնական տարբերակ, ներառյալ ֆորսմաժորային իրավիճակների պարենային զամբյուղի նախագիծը որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ և Էկոնոմիկայի նախարարի կողմից զեկուցվել է Վարչապետին:

3.18 Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն	Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագրի շրջանակում հաստատվել է 2 շահառուի 14 հայտ և տրամադրվել է 66.9 մլն ՀՀ դրամ աջակցություն, իսկ սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագրի շրջանակում 16 տնտեսավարողի տրամադրվել է շուրջ 67.1 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 6704 գլուխ ԽԵԿ-ի սպանդի ծառայության համար: